

ՏՆԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԻՄՏՏ ՈՒՂԵԿԻՑ

Տնային օժանդակության ծառայությունների
դյուրամատչելի ուղեցույց



323-939-0506
www.bettzedek.org



Bet Tzedek Legal Services-ը («Բեթ Ցեդեկ իրավաբանական ծառայություններ») հանրային իրավունքի հարցերով զբաղվող ոչ-շահութաբեր կենտրոն է, որն անվճար իրավաբանական ծառայություններ է տրամադրում Լոս Անջելես քառնթիի ցածր եկամուտ ունեցող քաղաքացիներին: «Բեթ Ցեդեկ» եբրայերեն նշանակում է «վրդարադատության տուն»: Bet Tzedek-ն իր հաճախորդներին սպասարկում է անկախ նրանց ռասայական, կրոնական ու էթնիկական պատկանելությունից:

Այս գրքուկի հեղինակը Քիմ Սելֆոնն է (Kim Selfon), խմբագիրները՝ Ջանեթ Մորրիս (Janet Morris) ու Դիպիթի Սինգհը (Dipti Singh) Bet Tzedek-ից: Քրիսթի Բուրքհարթը (Kirsty Burkhart) Bet Tzedek-ից, Չարլզ Բինը (Charles Bean) Կալիֆորնիայի Տևային օժանդակության ծառայությունների Սպառողների դաշինքից, Ջոդի Սթրեյթլը (Jody Spiegel) ու Ջուլի Փոլլոքը (Julie Pollock) Կալիֆորնիայի ակտիվիստներ հոգուտ ծերանոցային համակարգի բարեփոխման կազմակերպությունից, Քևին Ասլանյանը (Kevin Aslanian) Կալիֆորնիայի սոցիալական նպաստների իրավունքներով զբաղվող կազմակերպությունների դաշինքից և Քրիսթին Լոուիսը (Kristine Loomis) մեզ սպառողական ու մասնագիտական բնույթի արժեքավոր մեկնաբանություններ ու առաջարկներ են ներկայացրել: Հուսով ենք, որ այս տեղեկատվությունն ուղեցույց կհանդիսանա IHSS սպառողների, մատակարարների և ջատագույների համար:

Այս ուղեցույցը փաստաբանի կամ մեկ այլ մասնագետի անկախ դատողությանն ու հմտությանը փոխարինող միջոց չէ: Եթե իրավաբանական, կամ այլ մասնագիտական խորհրդի կարիք ունեք, ապա խնդրում ենք, ուղեցույցում ներկայացվող տեղեկատվությունը լրացնելու և վավերացնելու համար, դիմել Ձեր բնակավայրում գործող իրավասու մասնագետի օգնությանը, քանի որ այս ուղեցույցը վերաբերում է Լոս Անջելես քառնթիում տրամադրվող ծառայություններին:

Հեղինակներն ու հրատարակիչն արել են հնարավոր ամեն ինչ՝ ապահովելու այս գրքուկի ճշգրտությունը, թարմությունն ու հրատարակման պահին ընդունված չափանիշներին դրա համապատասխանությունը: Վրիպակների, բացթողումների, կամ գրքուկի կիրառման հետևանքների համար հեղինակները, խմբագիրներն ու հրատարակիչը պատասխանատվություն չեն կրում և գրքուկի բովանդակության կապակցությամբ որևէ բացահայտ կամ ենթադրվող երաշխավորություն չեն տրամադրում:

BetTzedek Legal Services
323-939-0506 • www.bettzedek.org

Բովանդակություն

Ի՞նչ են Տնային օժանդակության ծառայությունները (IHSS)	2
Ինչպե՞ս ստանալ IHSS որակավորում	2
Ինչպե՞ս դիմել IHSS սպասարկման	3
Ինչպե՞ս գրանցվել Medi-Cal-ում	3
Ինչպե՞ս դիմել Medi-Cal-ին անդամագրման	3
Ինչպե՞ս գտնել IHSS տնային խնամքի մատակարար	3
Ի՞նչ ծառայություններ է IHSS-ը մատուցում	5
Ինչպե՞ս ստանալ IHSS-ի առավելագույն հնարավոր ժամաքանակը	7
Ինչպե՞ս ավելացնել իմ IHSS ժամաքանակը	9
Իմ վիճակը վատթարացել է. կարո՞ղ եմ IHSS-ի ավելի մեծ ժամաքանակ ստանալ	9
Ի՞նչ է պաշտպանական վերահսկողությունը	10
Ի՞նչ են պարաբժշկական ծառայությունները	13
Կարո՞ղ է, արդյոք, ամուսինս կամ կինս լինել իմ IHSS մատակարարը	13
Կարո՞ղ եմ, արդյոք, լինել անչափահաս երեխայիս IHSS մատակարարը	14
IHSS-ը կրճատել է իմ ժամաքանակը. ի՞նչ անել	15
Ինչպե՞ս լսում խնդրել	15
Ի՞նչ է լինում լսում խնդրելուց հետո	16
Ի՞նչ է Պայմանական ետքաշման համաձայնագիրը	16
Ի՞նչ է տեղի ունենում IHSS լսման նիստին	18
IHSS խնդրի օրինակ. Սյուն ավելի մեծ IHSS ժամաքանակի	19
կարիք ունի. ի՞նչ կարող է նա անել իր IHSS ժամերն ավելացնելու համար	19
Ինչպե՞ս հավելյալ տեղեկատվություն գտնել IHSS ծառայությունների եվ շահերի փաստարկման մասին	20
Ի՞նչ են վճարում տնային խնամքի համար այլ ծրագրերը	21
IHSS գնահատման աշխատանքային թերթիկ	22



ԻՆՉ ԵՆ ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱԴԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (IHSS)

Տնային օժանդակ ծառայությունները, կամ IHSS-ը, Medi-Cal ծրագրի մաս են: IHSS-ը վճարում է Ձեր տանը կամ աշխատավայրում տրամադրվող տնային ծառայությունների համար, որպեսզի տանն ապահով զգաք, կամ ապահով կերպով շարունակեք աշխատել: IHSS-ը վճարում է ծնողին, ամուսնուն/կնոջը, ընտանիքի անդամին, կամ մեկ այլ մատակարարի՝ որպեսզի նա օգնի Ձեզ օգտվել անհրաժեշտ ծառայություններից: Տնային խնամքի ծառայությունների համար IHSS-ը վճարում է ամիսը մինչև 283 ժամ:

ԻՆՉՊԵ՞Ս ԱՏԱՆԱԿ IHSS ՈՐԿԿՎՎՈՐՈՒՄ

IHSS որակավորում ստանալու համար անհրաժեշտ է ունենալ Medi-Cal: Անհրաժեշտ է, որ բնակվեք Ձեր տանը, որը կարող է լինել բնակարան, առանձնատուն, կամ մեկ այլ անձի տունը: IHSS կարող եք ստանալ, եթե անօթևան եք: IHSS չեք կարող ստանալ, եթե ապրում եք օժանդակ կեցության, գիշերօթիկ, կամ բուժակային խնամքի հաստատությունում:

Անհրաժեշտ է, որ սեփական տանն ապահով մնալու համար ունենաք տնային խնամքի կարիք: Անհրաժեշտ է, որ Ձեր բժիշկը կամ արտոնագրված բժշկական մասնագետը լրացնի IHSS առողջական խնամքի վկայագրման թերթիկ (IHSS Health Care Certification Form)՝ նշելով, որ.

- առօրյա կեցության առևձազն մեկ գործողություն կատարելու համար (օրինակ՝ եփել, մաքրել, հագնվել, կամ լոգանք ընդունել) օգնության կարիք ունեք, և
- կարիք ունեք առևձազն մեկ IHSS ծառայության՝ կանխելու համար Ձեզ ոչ-տնային խնամքի տրամադրման անհրաժեշտությունը:

ԻՆՉՊԵՐՍ ԴԻՄԵԼ IHSS ՄՊԱՍԱՐԿՄԱՆ

Լուս Անջելես քառուկթիում դիմում և ներկայացնելու համար զանգահարե՛ք 888-944-4477 կամ 213-744-4477, կամ դիմե՛ք Հանրային սոցիալական ծառայությունների վարչության՝ Ձեր տեղական գրասենյակ:

ԻՆՉՊԵՐՍ ԳՐԱՆՑՎԵԼ MEDI-CAL-ՈՒՄ

Medi-Cal-ը ցածր եկամուտ ունեցող անձանց համար նախատեսված առողջական ապահովագրության ծրագիր է: Medi-Cal-ի որոշ ծրագրերի ներքո պահանջվում է նաև, որ փոքր ունեցվածքի տեր լինեք: Medi-Cal-ը վճարում է բժշկական բուժման, դեղորայքի, մեծահասակների ցերեկային առողջական խնամքի, հոսպիտալացման, որակյալ բուժակային խնամքի, տնային խնամքի և դիմացկուն բժշկական սարքավորման համար: Կարող եք միաժամանակ անդամակցել թե՛ Medicare-ին, թե՛ Medi-Cal-ին:

Եթե որոշվել է Ձեզ Medi-Cal տրամադրել, սակայն ամսավճար մուծել (այլ կերպ ասած՝ ծախսերի վճարմանը մասնակցել) ի վիճակի չեք, ապա կարող եք ունենալ Medi-Cal-ի այլ, նվազ ծախսատար ծրագրերի իրավունակություն:

Եթե Medi-Cal-ը մերժվել է Ձեզ, ապա հնարավոր է՝ լինեն Ձեր եկամուտը կամ խնայողությունները հարմարեցնելու այնպիսի տարբերակներ, որոնք Ձեզ Medi-Cal-ի համար որակավորելի կդարձնեն:

Medi-Cal-ի որակավորման կանոնները բարդ են: Medi-Cal-ի՝ Ձեզ համար լավագույն ծրագիրը գտնելու, ինչպես նաև Medi-Cal-ի մերժման հարցով օգնության համար դիմե՛ք Health Consumer Alliance-ին, www.healthconsumer.org, կամ զանգահարե՛ք 888-804-3536:

ԻՆՉՊԵՐՍ ԴԻՄԵԼ MEDI-CAL-ԻՆ ԱՆԴԱՍԱԳՐՄԱՆ

Կարող եք դիմել առցանց՝ www.CoveredCA.com կայքում: Կարող եք նաև դիմել անձամբ՝ Սոցիալական ծառայությունների վարչության Ձեր տեղական գրասենյակում, կամ զանգահարելով 800-300-1506:

ԻՆՉՊԵՐՍ ԳՏՆԵԼ IHSS ՏՆԱՅԻՆ ԻՆԱՍՄԻ ՄԱՏԱԿԱՐԱՐ

Անհրաժեշտ է որոշել՝ ով է Ձեր մատակարարը: Մատակարար կարող է լինել ընտանիքի անդամը, ընկերը, կամ որևէ մասնավոր մատակարար: Ժամանակ տվեք ինքներդ Ձեզ՝ գտնելու որակյալ մեկին: Ուսումնասիրեք նրա փորձառությունը, խոսեք նրան ճանաչողների հետ, քննարկեք տնային խնամքի Ձեր կարիքներն ու այն, թե արդյո՞ք մատակարարը ցանկանում է և ի վիճակի է օգնել Ձեզ այդ հարցերում:

IHSS ծրագրի տեսանկյունից Դուք աշխատատու եք: Ձեր խնդիրն է՝ գտնել տնային խնամքի մատակարար, օգնել մատակարարին, որ վարժվի Ձեր խնդիրներին, վերահսկել մատակարարին ու անհրաժեշտության դեպքում՝ գործից ազատել մատակարարին:

IHSS-ը Ձեզ ժամաթերթիկներ կուղարկի, որոնք պետք է լրացնեք ու ստորագրեք: IHSS-ն ընթացք կտա այդ ժամաթերթիկներին, ապա կվճարի մատակարարին: Նախքան իբրև IHSS-ի մատակարար աշխատելը, բոլոր մատակարարները, տույնիսկ ընտանիքի անդամներն ու ընկերները, պետք է քրեական անցյալի ստուգում անցնեն ու ավարտեն IHSS-ի մատակարարի կողմնորոշման դասընթացը:



Լուս Անչելես քառնախումբը Անձնական օգնության ծառայությունների խորհուրդը (Personal Assistance Services Council) (877-565-4477) ունի տևալին խնամքի մատյան, որում գրանցված են IHSS տևալին խնամքի որակավորում ունեցող մատակարարները: Եթե ծանր հաշմանդամություն ունեք, Ձեզ կարող են նաև ժամանակավորապես փոխարինող մատակարարներ առաջարկել, եթե Ձեր սովորական IHSS մատակարարը հասանելի չէ: Տեղական մատակարարների մատյանն այլ քառնախումբում ձեռք բերելու համար անհրաժեշտ է դիմել IHSS-ի՝ Ձեր տեղական Հանրային մարմին: Ձեր տեղական Հանրային մարմին գտնելու համար դիմե՛ք www.capaihss.org, կամ 916-492-9111:

Ինչպե՞ս է IHSS-ը որոշում՝ տևալին խնամքի ի՞նչ ժամաքանակ է ինձ հասնում.

IHSS-ն իրավունակության հարցը որոշող աշխատակից կուղարկի Ձեր տուն, ով կգնահատի տևալին խնամքի Ձեր կարիքները: Իրավունակության հարցերով զբաղվող այս աշխատակիցներին IHSS-ն անվանում է «սոցիալական աշխատողներ»: Թերևս, անհրաժեշտ կլինի, որ սոցիալական աշխատողին պատմեք Ձեր հաշմանդամության մասին, և թե ինչպե՞ս է Ձեր հաշմանդամությունն ազդում առօրյա կյանքում Ձեր գործողությունների վրա: Սոցիալական աշխատողը Ձեզ հարցուկործ կանի Ձեր առօրյա խնամքի կարիքների մասին: Իր դիտարկումների ու Ձեր տրամադրած տեղեկությունների հիման վրա, սոցիալական աշխատողը կսահմանի Ձեր IHSS ժամաքանակը: IHSS-ը վճարում է ամսական մինչև 283 ժամ տևալին խնամքի համար՝ ըստ Ձեր անհատական կարիքների: Ամսական միջին ժամաքանակը 105 ժամ է: IHSS-ի սոցիալական աշխատողը տարին մեկ անգամ կայցելի Ձեզ տուն՝ Ձեր կարիքները վերագնահատելու համար:

Ձեր կարիքների գնահատումն ավարտելուց հետո սոցիալական աշխատողը Ձեզ փոստով կուղարկի Գործողության ծանուցագիր (Notice of Action): Գործողության ծանուցագիրը ցանկագրում է գնահատման արդյունքում Ձեզ համար սահմանված IHSS ծառայության ժամերն ու ծառայության յուրաքանչյուր տեսակի համար ստանալիք ժամերը:

Ի՞նչ ծանուցումներ է IHSS-Ը ՄԱՏՈՒՑՈՒՄ

IHSS-ը վճարում է նահանգային օրենքով սահմանված կոնկրետ ծառայությունների համար: Ստորև, ընդհանուր կարգով, ներկայացվում են IHSS-ի ծածկույթի տակ գտնվող ծառայության տեսակները: Ավելի կոնկրետ ցանկը կարելի է գտնել առցանց՝ Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների վարչության (California Department of Social Services, CDSS) Քաղաքականության և ընթացակարգի ձեռնարկի Բաժին 30, Գլուխներ 30-757-ում (Manual of Policies and Procedures Division 30, Chapter 30-757), www.dss.cahwnet.gov/ord/entres/getinfo/pdf/ssman2.pdf հասցեով:

Տևալին ծառայություններ. ավել, փոշեծծել, խոհանոցն ու լոգարանը մաքրել, աղբը հանել դուրս, փոշին թափ տալ, փոխել անկողնի սպիտակեղենը, մաքրել անվասայլակն ու վերալիցքավորել անվասայլակի մարտկոցները

Կերակուր պատրաստել. պատրաստել ու եփել կերակուր, ուտելիքը այլուրեի վերածել

Սեղանը հավաքել. բարձել ու բեռնաթափել ամանեղեն լվալու մեքենան, լվանալ ամանները

Լվացք. լվանալ ու չորացնել լվացքը, ծալել ու տեղավորել հագուստը

Մթերային գնումներ կատարել. նպարտեղնի ցանկ կազմել, գնալ խանութ ու վերադառնալ, առևտուր անել, բարձել, բեռնաթափել ու պահեստավորել սննդամթերքը



Այլ գնումներ կատարել. անձնական հանձնարարությամբ այստեղ կամ այնտեղ գնալ, գնումների ցանկ կազմել, գնալ խանութ ու վերադառնալ, առևտուր անել, բարձել, բեռնաթափել ու պահեստավորել գնումները

Շնչառություն. օգնել վակուումային սեղման, թթվածնի, ներուվայզերի կամ այլ շնչառական մեքենա կամ սարք գործածելիս

Աղիքների և միզապարկի խնամք. օգնել զուգարան հաճախելիս, ներառյալ անկողնային անոթների/մահճակալին կից զուգարանակոնքերի և տակդիրավոր անդրավարտիքների օգտագործումն ու մաքրումը, ինչպես նաև մատակարարի ու սպառողի ձեռքերը լվանալու համար անհրաժեշտ ժամանակը

Կերակրել. օգնություն՝ ուտելիս և խմելիս, ներառյալ ուտելու մասին խոսքով հուշելը

Անկողնում սովորական լոգանքային հիգիենա. օգնություն՝ անկողնում լոգանք կամ սպունգային լոգանք ստանալիս

Հագնվել. օգնել հագնվելիս ու հանվելիս

Դաշտանային խնամք. օգնել դաշտանային տակդիրների հարցերը լուծելիս

Տեղաշարժում. օգնել տանը կամ աշխատավայրում քայլելիս կամ շարժվելիս

Փոխադրում. օգնել մեկ դիրքից մյուսին փոխադրվել

Լոգանք. օգնել լոգանք ընդունել լոգարանում կամ ցնցուղով; օգնել ցնցուղի տակ մտնել ու ցնցուղի տակից դուրս գալ; մարմինը չորացնել; օգնել քսուքներ, դետոդրանտ և փոշի գործածելիս

Բերանի խոռոչի հիգիենա. օգնել ատամի մածուկ օգտագործել, խոզանակով մաքրել ատամները, խնամք տանել արհեստական ատամնաշարերի համար, ատամնաթել օգտագործել

Անձնական խնամք. օգնել սանրվել սանրով/խոզանակով, կտրել եղունգները, սափրվել

Դիրքը փոխել/շփել մաշկը. օգնել շրջվել անկողնում, կամ տեղափոխվել աթոռին,

շփել մաշկը՝ շրջանառությունը խթանելու և/կամ մաշկին ճաքերի առաջացումը կանխելու համար

Ճարժման տարածունության վարժություններ. օգնել շարժման տարածունության և ուժեղացման վարժություններում, օգնել՝ օգնությամբ քայլելիս, մկանների և քայլքի ամրապնդման նպատակով

Խնամք և օգնություն՝ պրոթեզային սարքերի հարցում. օգնել պրոթեզային սարքերի հարցում, ներառյալ ատամնաշարի ուղղիչ սարքերը, սեղմիչ գուլպաները, տեսողական/ստղական սարքերը

Օգնություն դեղորայքի հարցում. օգնել դեղորայք ընդունել, ներառյալ հաբերը փոշիացնելու ժամանակն ու հաբերի շաբաթական տունիք լիցքավորելը

Ուղեկցում բժշկական ժամադրության և ետ. փոխադրել բժշկական մասնագետի գրասենյակ՝ ժամադրության և ետ, ներառյալ ատամնաբույժի, քիրոպրակտիկի և ֆիզիոթերապևտի հետ, ի թիվս այլոց: Սա կարող է ներառել նաև այն ժամանակը, որի ընթացքում մատակարարը սպասում է բժշկի գրասենյակում, մինչև ժամադրությունն ավարտվելը

Ուղեկցում այլ վայրեր, որտեղ Դուք IHSS-ի փոխարեն այլ ծառայություններ եք ստանում. փոխադրում մեծահասակների ցերեկային առողջական խնամքի կենտրոններ, տարեցների ճաշի ծրագրեր, ցերեկային ժամանցի կենտրոններ ու այլ վայրեր, որտեղ ծառայություններ են տրամադրվում

Պաշտպանական վերահսկողություն. հետևել այն անձանց, ում չի կարելի միայնակ թողնել իմացական կամ մտավոր բնույթի սահմանափակման պատճառով, օրինակ՝ դեմենտիայի, աուտիզմի, գարգացման հաշմանդամության, հոգեկան հիվանդության կամ որևէ այլ մտավոր սահմանափակման, որը սահմանափակում է պատշաճ կերպով վտանգավոր իրավիճակները գնահատելու՝ այդ անձի կարողությունը:

Պարաբժշկական ծառայություններ. օգնել մարմնական ներթափանցում պահանջող խնամքի հարցում, օրինակ՝ արյան շաքարի պարունակության ստուգում, սրվյուժ, կաթետերային խնամք, կամ աղետամոքսային սնուցման խողովակով կերակրում: Ձեր բժիշկը կամ առողջական խնամքի մատակարարը պետք է Ձեր մատակարարին սովորեցնի ապահով կերպով պարաբժշկական ծառայություններ տրամադրել: Բժիշկը պետք է լրացնի պարաբժշկական ծառայությունների թերթիկը, որպեսզի կարողանաք այս ծառայություններից օգտվել:

ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ IHSS-Ի ԱՌՎԵԼԱԳՈՒՅՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԺԱՄԱԶՆԱԿԸ

Հնարավոր առավելագույն ժամաքանակը ստանալու համար նախապատրաստվե՛ք Ձեր IHSS գնահատմանը: Չննե՛ք վերը նշված ծառայությունների տեսակներն ու որոշե՛ք՝ յուրաքանչյուր տեսակի համար որքա՞ն ժամանակ է Ձեզ անհրաժեշտ: Կարող եք լրացնել 22-25 էջերում ներկայացված IHSS-ի գնահատման աշխատանքային թերթիկն ու գնահատման այցի ժամանակ գնել այն Ձեր IHSS սոցիալական աշխատողի հետ: Լրացված աշխատանքային թերթիկի օրինակը կարող եք փոխանցել Ձեր IHSS սոցիալական աշխատողին:

IHSS սոցիալական աշխատողի հետ Ձեր կարիքների մասին խոսելիս եղեք անկեղծ: Թեև նրան անձնական տեղեկատվություն տրամադրելիս կարող եք անհարմար զգալ, սակայն լավ գնահատում անելու համար սոցիալական աշխատողն այդ տեղեկատվության կարիքն ունի: Գնահատման հանդիպմանը կարող եք ներկայանալ ընտանիքի անդամի, ընկերոջ կամ մատակարարի հետ, ով կօգնի Ձեզ ձևակերպել Ձեր կարիքներն ու աջակցություն կտա Ձեզ:

ИHSS-ը հասկանում է, որ յուրաքանչյուրի ամենօրյա պայմանները փոփոխվում են: Բացատրե՞ք սոցիալական աշխատողին՝ ի՞նչ է լինում, երբ անհաջող օր եք ունենում: Եթե ի վիճակի եք քայլել, երբ սոցիալական աշխատողն այցելում է Ձեզ, սակայն անհաջող օրերին չեք կարողանում քայլել, ապա սոցիալական աշխատողին անպայման հաղորդեք այդ տեղեկատվությունը: Եթե ИHSS սոցիալական աշխատողին այս տեղեկատվությունը չհայտնեք, ապա նա կենթադրի, որ Դուք միշտ էլ ի վիճակի եք քայլել:

Տնային ու առնչվող ծառայությունների, օրինակ՝ մաքրելու, կերակուր պատրաստելու, սեղանները հավաքելու, լվացքի, առևտրի ու մանր գործերի ժամաքանակը սովորաբար բաժանվում է տանն ապրող անձանց թվի վրա: Որքան շատ մարդ է ապրում Ձեր տանը, այնքան ավելի քիչ կլինի այս տեսակների համար Ձեր ժամաքանակը: Սոցիալական աշխատողին անպայման տեղյակ պահեք, երբ Ձեր տան անդամներից որևէ մեկն առանձնանում է, կամ իր կերակուրը, կամ տնային ու այլ առնչվող ծառայությունները Ձեզ հետ չի կիսում:

Ինչպե՞ս գիտենալ՝ ի՞նչ ժամաքանակ կստանամ

ИHSS սոցիալական աշխատողի գնահատումից հետո, վերջինիցս Գործողության ծանուցագիր կստանաք: Այն Ձեզ կտեղեկացնի՝ ամսական ի՞նչ ИHSS ժամաքանակ ունեք, ժամերը ե՞րբ են սկսում (ուժի մեջ մտնելու օրը), առանձին կեշի՝ ИHSS ծառայության յուրաքանչյուր տեսակից շաբաթը որքա՞ն ժամ եք ստանում, օրինակ՝ հազվելու կամ լուրջ ընդունելու համար: Գործողության ծանուցագիրը ցուցումներ ունի՝ ինչպե՞ս բողոքարկել, եթե Ձեզ մերժել են ИHSS տրամադրել, կամ եթե ավելի մեծ ժամաքանակ եք ցանկանում: Գործողության ծանուցագիր Ձեզ կուղարկեն ամեն անգամ, երբ ժամաքանակը փոխվի, և յուրաքանչյուր տարեկան գնահատումից հետո: Բողոքարկման վերջնաժամկետ կա. հավելյալ տեղեկատվության համար տեսե՞ք այս գրքուկի բողոքարկման հարցերին նվիրված բաժինը:

Անպայման ուշադիր զննեք Գործողության ծանուցագիրը, որպեսզի համոզվեք՝ արդյո՞ք բավարար ժամաքանակ ունեք ծառայության յուրաքանչյուր տեսակի Ձեր կարիքները հոգալու համար: Գործողության ծանուցագրում նշված ժամերը հաշվարկվում են շաբաթական հիմունքով: Օրինակ, եթե լուրջ ընդունելու համար ստանում եք 3:30, ապա նշանակվում է, որ լուրջ ընդունելիս օգնության համար ստանում եք շաբաթական երեք ժամ, 30 րոպե, կամ օրը 30 րոպե: Եթե ծառայության տեսակի դիմաց նշված է ‘0’, ապա այդ ծառայության համար ИHSS-ը Ձեզ ժամաքանակ չի հատկացրել:

Եթե կարծում եք, որ ИHSS-ի կողմից Ձեզ հատկացված ժամաքանակը բավարար է Ձեր կարիքները հոգալու համար, ապա՝ լավ: Եթե ժամաքանակը բավարար չէ, ապա կարող եք սոցիալական աշխատողին խնդրել՝ ավելացնել ժամաքանակը, կամ նոր լսում հայցել ավելի մեծ ժամաքանակ ստանալու համար:

Եթե հիվանդանոցում կամ բուժակային տանն եմ, և նախքան տուն վերադառնալուց ցանկանում եմ գիտենալ իմ ИHSS ժամերը, կարո՞ղ եմ գնահատում խնդրել:

Այո, ИHSS-ը կարող է զննել Ձեզ բժշկական հիմնարկում և գնահատել՝ տուն վերադառնալուց հետո ի՞նչ ժամաքանակ կստանաք: Երբ տանը լինեք, ИHSS-ը կայցելի Ձեզ ու լիարժեք գնահատում կանցկացնի: Եթե ИHSS սոցիալական աշխատողը հրաժարվի հիմնարկում գնահատել Ձեզ, ապա հնարավոր է, որ Ձեզ անհրաժեշտ լինի կանչել նրա ղեկավարին, որպեսզի Ձեզ համար հիմնարկում գնահատում անցկացնեն: Ղեկավարի անունն ու համարը ճշտելու համար, Լոս Անջելես քառույթում կարող եք զանգահարել ИHSS-ի Մարդու իրավունքների պաշտպանին: Մարդու իրավունքների պաշտպանի համարն է՝ 888-678-4477:



ԻՆՉՊԵՐՍ ԱՎԵԼԱՑՆԵԼ ԻՄ IHSS ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Ձեր ժամաքանակն ավելացնելու լավագույն ձևը գիտենալն է՝ յուրաքանչյուր ծառայության տեսակից որքա՞ն ժամի կարիք ունեք, և այդ տեղեկատվությունը Ձեր IHSS սոցիալական աշխատողին տալը: Լրացրե՛ք IHSS Գնահատման աշխատանքային թերթիկը, որը կցվում է այս գրքուկին՝ հասկանալու Ձեր ժամաքանակի կարիքները, և տվե՛ք այն IHSS սոցիալական աշխատողին:

IHSS-ի հետ խոսելիս եղեք կոնկրետ: Պատմե՛ք՝ յուրաքանչյուր ծառայությունից օրական կամ շաբաթական քանի՞ ժամ կարիք ունեք ստանալ: Օրինակ, եթե սևվելու համար օրական 60 րոպեի կարիք ունեք, ապա IHSS սոցիալական աշխատողին ասացե՛ք, որ կարիք ունեք, որպեսզի մեկը Ձեզ 60 րոպե օգնի կերակուր ընդունել: Նույնն արեք յուրաքանչյուր ծառայության համար: Սա կօգնի IHSS-ին՝ Ձեզ տալ անհրաժեշտ ժամաքանակ:

Գրառե՛ք IHSS-ին Ձեր բոլոր գանգերը: Գրանցե՛ք օրը, ժամն ու այն անձի անունը, ում գանգահարել եք: Անպայման հաղորդագրություն թողե՛ք՝ ասելով, որ ավելի մեծ ժամաքանակի կարիք ունեք: Կարող եք նաև նամակ գրել IHSS-ին՝ ավելի շատ ժամ խնդրելով: Ձեր արխիվում պահեք նամակի պատճենը:

ԻՄ ՎԻՃԱԿԸ ՎԱՏԹԱՐԱՑՆԵԼ Է. ԿԱՐՈ՞Ղ ԵՄ IHSS-Ի ԱՎԵԼԻ ՄԵԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ ՍՏԱՆԱԼ

Երբ Ձեր վիճակը վատթարանում է, և տնային խնամքի կարիքները փոխվում են, կարող եք գանգահարել Ձեր IHSS սոցիալական աշխատողին ու վերագնահատում խնդրել: Պատմե՛ք այդ աշխատողին Ձեր վիճակի փոփոխության մասին ու ավելի շատ ժամ խնդրեք: Սոցիալական աշխատողը կարող է գնահատել Ձեզ հեռախոսով, կամ տանը: Դուք վերագնահատման իրավունք ունեք, եթե Ձեր վիճակը վատթարանում է: Նոր ժամաքանակ խնդրելու համար տարեկան վերագնահատմանը սպասելու կարիք չունեք:



Ես գանգահարել եմ սոցիալական աշխատողին ու խնդրել ավելացնել ժամաքանակս, սակայն այն չի ավելացվել: Ի՞նչ անեմ:

Եթե IHSS աշխատողն անտեսում, կամ մերժում է ժամաքանակն ավելացնելու Ձեր խնդրանքը, ապա օգնության համար դիմեք նրա ղեկավարին: IHSS սոցիալական աշխատողները հաճախ գրասենյակում չեն լինում, և ղեկավարն ավելի պատրաստակամ կերպով կարծագանքի Ձեր խնդրանքին: Եթե ղեկավարը մերժի ավելացնել Ձեր ժամաքանակը, գանգահարե՛ք փոխտնօրենին ու խնդրեք գործով բողոք գրանցել: Փոխտնօրենը պետք է գնևի Ձեր գործն ու պատասխանի Ձեր խնդրանքին:

Ձեր ժամաքանակն ավելացնելու հայցով կարող եք ցանկացած պահի լուրմ խնդրել: Եթե լուրմ խնդրեք, քառուփին պետք է պատասխանի լուրմ Ձեր խնդրանքին. Ձեր մտահոգություններն այն կքննարկի Ձեզ հետ ու կարող է բանակցել Ձեզ հետ ու լուծել խնդիրը, որպեսզի խուսափեք լուրմ գնալուց: Հավելյալ տեղեկատվության համար տեսե՛ք էջ 15, «Ինչպե՞ս լուրմ խնդրել» բաժինը:

Ի՞ՆՉ Ե ԴԱՇՏԴԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Եթե IHSS օգտատերն ունի դեմենտիա, մտավոր կամ հոգեզգացման հաշմանդամություն, հոգեկան առողջության խնդիր, կամ հոգեվիճակի մեկ այլ սահմանափակում, ու չի կարող միայնակ մնալ, ապա IHSS-ն ունի արտոնության հատուկ տեսակ՝ պաշտպանական վերահսկողություն: Դրա ներքո, IHSS-ը կվճարի մատակարարին, որպեսզի վերջինս հետևի օգտատիրոջն ու նրան զերծ պահի վնասից:

Պաշտպանական վերահսկողությունը երեխաների ու մեծահասակների համար նախատեսված արտոնություն է: IHSS օգտատերը պետք է վտանգավոր վարքագիծ հանդես բերելիս լինի ու մնա շուրջօրյա վերահսկողության տակ: Անձը պետք է ինքնադեկավարում չունենա: Ինքնադեկավարում չունենալ նշանակում է չհասկանալ ու չգնահատել վտանգն ու չհասկանալ սեփական անձին վնասելու ռիսկը: Քանի որ անձը չի կարող հասկանալ հնարավոր վտանգները, նա կարող է իրեն վնասող գործողություններ կատարել:

Վտանգավոր վարքագծի օրինակ են տնից հեռանալն ու մոլորվելը, եփելուց հետո գազօջախը միացրած թողնելը, կամ օճառ ու ոչ-ուտելի այլ առարկա ուտելը: Խորհուրդ է տրվում ունենալ հնարավոր վտանգավոր վարքագծի դրսևորումների ցանկ, որում նաև կգրանցվի այն օրը, երբ տվյալ վարքագիծը դրսևորվել է: Օրինակ. մայիսի 1, կեսգիշերին մայրիկը փորձեց տնից դուրս գալ, ես նրան խնդրեցի անկողնի վերադառնալ: Երբ IHSS-ը պաշտպանական վերահսկողության նպատակով գնահատում կատարի, այդ ցանկը ներկայացրեք IHSS սոցիալական աշխատողին:

Անպայման բժշկին խնդրեք լրացնել «Պաշտպանական վերահսկողության կարիքի գնահատում» (Assessment of Need for Protective Supervision) թերթիկը, որը կարող եք ձեռքբերել www.dss.ca.gov/forms/english/SOC821.PDF կայքից: Այդ թերթիկում բժիշկը պետք է նշի վտանգավոր վարքագծի բոլոր դրսևորումները: Թերթիկն ուշադրությամբ գնևեք: Եթե թերթիկի տեղեկատվությունը ճիշտ չէ, ապա բժշկին խնդրեք ուղղել այն: Բժշկի կողմից այն լրացնելուց հետո թերթիկը հանձնեք IHSS սոցիալական աշխատողին, իսկ պատճենը պահեք Ձեր թղթապանակում: Եթե բժիշկը թերթիկն ուղարկի ուղիղ IHSS, ապա բժշկից խնդրեք դրա կրկնօրինակը:

Պաշտպանական վերահսկողությունն խնդրելիս, IHSS սոցիալական աշխատողին հանձնեք.

1. Բժշկի կողմից լրացված «Պաշտպանական վերահսկողության կարիքի գնահատում» թերթիկն ու
2. Անձի կողմից վտանգավոր վարքագծի դրսևորումների կամ դրսևորման փորձերի ցանկը: օ.

IHSS-ը հաճախ մերժում է պաշտպանական վերահսկողության արտոնություններն այն անձանց, ովքեր ունեն այս ծառայության կարիքը: Եթե պաշտպանական վերահսկողության արտոնությունների Ձեր խնդրանքը մերժել են, սակայն կարծում եք, որ IHSS-ի օգտատերն այնուամենայնիվ դրա կարիքն ունի, ապա պետք է լսում խնդրեք:

Եթե IHSS-ը համաձայնի պաշտպանական վերահսկողություն տրամադրել, ապա անձը կստանա ամսական առնվազն 195 IHSS ժամ: Եթե IHSS-ը գտնի, որ անձը ծանր սահմանափակումներ ունի և կարիք ունի պաշտպանական վերահսկողության, ապա անձը կստանա ամսական առնվազն 283 IHSS ժամ: «Ծանր սահմանափակումներ ունեցող» նշանակում է, որ անձը պետք է ունենա ամսական առնվազն 20 IHSS ժամ ոչ-բժշկական բնույթի անձնական ծառայություններ, պարաբժշկական ծառայություններ և կերակրի պատրաստում: Եթե սև վելիս և կերակուր պատրաստելիս անձն օգնության կարիք ունի, ապա IHSS-ը նաև կներառի այն ժամանակը, որն անհրաժեշտ է սեղանը հավաքելու համար՝ շաբաթը 20 ժամ հաշվարկով:



Շուրջօրյա անձնական ու բժշկական մոնիթորինգի կարիք շատերն ունեն: Սակայն, պաշտպանական վերահսկողության արտոնություններն անձնական ու բժշկական մոնիթորինգի կարիքների ծածկույթ չեն տալիս: Խնդրում ենք նկատի ունենալ, որ պաշտպանական վերահսկողությունը կմերժվի, եթե այն հայցվում է.

- ընկերական այցերի համար
- որևէ մեկի բժշկական վիճակը վերահսկելու նպատակով (օրինակ՝ ջղաձգման նոպաների, ընկնելու ռիսկի, ալերգիկ ռեակցիայի, վակուումային սեղմման մոնիթորինգ)
- բժշկական արտակարգ իրավիճակի ակնկալիքով
- հակասոցիալական կամ ագրեսիվ վարքագծի մոնիթորինգի նպատակով
- դիտավորյալ ինքնակործան վարքագծի դեմ պաշտպանության նպատակով, օրինակ՝ ինքնասպանության, կամ երբ անձը գիտակցաբար փորձում է ինքն իրեն վնասել

Պաշտպանական վերահսկողության մասին հավելյալ տեղեկատվության համար տեսե՛ք Disability Rights California-ի «Տնային օժանդակության ծառայությունների Պաշտպանական վերահսկողություն» (In-Home Supportive Services Protective Supervision) հրապարակումը՝ www.disabilityrightscs.org/pubs/549301.pdf հղմամբ:

ԻՆՉ ԵՆ ՊԱՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պարաբժշկական ծառայությունները ծառայություններ են, որոնք սովորաբար տրամադրվում են բժշկական մասնագետի կողմից: Երբ Ձեր բժշկական մատակարարը Ձեր IHSS մատակարարին խնդրում է նման ծառայություն մատուցել, այն կոչվում է պարաբժշկական ծառայություն:

Պարաբժշկական ծառայության օրինակ են արյան մեջ շաքարի պարունակության ստուգումը, սրսկելը, վերքերի խնամքը, արյան ճշումը չափելն ու կաթետերային խնամքը:

IHSS-ը պահանջում է, որ նախքան այս ժամերի խնդրանքը բավարարելը, Ձեր բժիշկը լրացնի «Պատվերի հայց և համաձայնություն - Պարաբժշկական ծառայություններ» (Request for Order and Consent - Paramedical Services) կոչվող պարաբժշկական ծառայությունների թերթիկ:

Պարաբժշկական ծառայությունների թերթիկը կարելի է ձեռքբերել www.dss.cahwnet.gov/cdssweb/entres/forms/english/soc321.pdf հղմամբ: Տվե՛ք այն Ձեր բժշկին ու խնդրեք լրացնել: Անպայման հայտնեք բժշկին՝ քանի՞ րոպե է պահանջվում Ձեր մատակարարից յուրաքանչյուր պարաբժշկական գործողությունը կատարելու համար: Թերթիկն ուշադրությամբ գնե՛ք: Եթե թերթիկում պարունակվող տեղեկատվությունը սխալ է, ապա խնդրեք բժշկին ուղղել այն:

Պարաբժշկական ծառայությունների լրացված թերթիկի մի օրինակը տվեք Ձեր IHSS սոցիալական աշխատողին, իսկ մյուս օրինակը պահեք Ձեզ մոտ: Եթե բժիշկը թերթիկն ուղիղ ուղարկում է IHSS, ապա խնդրե՛ք նրանց, որ Ձեզ ուղարկեն դրա պատճենը:

ԿԱՐՈՂ Է, ԱՐԴՅՈՋ, ԱՄՈՒՄԻՆՍ ԿԱՄ ԿԻՆՍ ԼԻՆԵԼ ԻՄ IHSS ԱՄՏԱԿԱՐԱՐԸ

Եթե ամուսնացած եք ու IHSS եք ստանում ապա Ձեր կինը/ամուսինը կարող է լինել ոչ-բժշկական անձնական ծառայությունների (օրինակ՝ հազվադեպ կամ լրացնող ընկունելիս օգնելը) և պարաբժշկական ծառայությունների հարցում Ձեր IHSS մատակարարը:



Տևային կամ դրանց առնչվող IHSS ծառայությունների (ներառյալ տան գործերը, կերակրի պատրաստումը, սեղան հավաքելը, լվացքը, առևտուրն ու մանր գործերը), ինչպես նաև պաշտպանական վերահսկողության ու բժշկական ժամադրությունների ուղեկցելու համար IHSS ժամ Դուք չեք ստանա, եթե Ձեր ամուսինը/կինն ի վիճակի և ներկա է այս ծառայությունները Ձեզ տրամադրելու համար: Եթե Ձեր ամուսինը/կինն ի վիճակի չէ, կամ ներկա չէ կոնկրետ այս ծառայությունները Ձեզ տրամադրելու համար, որովհետև աշխատում է, կամ առողջական, կամ որևէ այլ անխուսափելի պատճառ ունի, ապա մատակարարը կարող է վճարվել կերակրի պատրաստման, բժշկական ժամադրության ուղեկցելու և պաշտպանական վերահսկողության համար:

Եթե Ձեր ամուսինը/կինը ստիպված է թողնել իր լիադրույք աշխատանքը, կամ չի կարող լիադրույք աշխատանք փնտրել, որովհետև Ձեզ հարմար որևէ այլ մատակարար չկա, ապա IHSS-ը կարող է Ձեր ամուսնուն/կնոջը վճարել պաշտպանական վերահսկողության և բժշկական ժամադրության ուղեկցելու համար:

ԿԱՐՈ՞Ղ ԵՄ, ԱՐԴՅՈՋ, ԼԻՆԵԼ ԱՆՉԱՓՈՎՈՒՄ ԵՐԵՒԱՅԻՍ IHSS ՄԱՏԱԿԱՐԱՐԸ

Ճնողը կարող է լինել իր տասնութ տարեկանից փոքր երեխայի IHSS մատակարարը: Ճնող-մատակարարների վերաբերյալ IHSS-ն ունի հատուկ կանոններ: Այս կանոնների մասին հավելյալ տեղեկատվության համար խնդրում ենք գննել IHSS-ի Մանրամասն կանոնների ձեռնարկը (IHSS Nuts and Bolts Manual), որը կարելի է գտնել www.disabilityrightscs.org կայքում, կամ զանգահարելով 800-776-5746:

Նկատի ունեցեք, որ երբ Ձեր երեխան դառնա տասնութ տարեկան, IHSS-ը կգնահատի երեխային իբրև մեծահասակ, և հավանաբար IHSS ժամաքանակը կաճի: Երեխան տասնութ տարեկան դառնալուն պես անպայման դիմեք IHSS սոցիալական աշխատողին՝ վերազնահատելու Ձեր երեխայի ժամաքանակը:

IHSS-Ը ԿՐՃԱՏԵԼ Է ԻՄ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ. ԻՆՉ ԱՆԵԼ

Երբ IHSS-ը կրճատում կամ դադարեցնում է Ձեր ժամաքանակը, ապա պետք է կրճատման կամ դադարեցման օրից 10 օր առաջ Ձեզ ուղարկի Գործողության ծանուցագիր: Եթե Նախքան կրճատման կամ դադարեցման օրը լսում խնդրեք, ապա կստանաք այսպես կոչված «Վճարվող օգնություն, քանի դեռ սպասում եք լսման նիստին» (Aid Paid Pending, APP): Սա նշանակում է, որ Ձեր IHSS ժամերը նույնը կմնան և չեն կրճատվի կամ դադարեցվի, քանի դեռ սպասում եք լսման նիստին: Երբ լսում եք խնդրում, անապայման խնդրեք, որ Ձեզ Aid Paid Pending տրամադրվի: Լսման դիմումների մասին հավելյալ տեղեկատվության համար տեսե՛ք հաջորդ բաժինը: Լսումը չչափելու դեպքում տրամադրված ժամերի համար Ձեզվից փոխհատուցում չի պահանջվի:

ԻՆՉՊԵ՞Ս ԼՍՈՒՄ ԽՆԴԻՆԵԼ

Դիմեք Նահանգային լսումների գրասենյակ և ասացեք, որ ցանկանում եք լսում ունենալ IHSS-ի խնդիրների լուծման նպատակով: Հակիրճ բացատրեք խնդիրը: Օրինակ՝ «Ես IHSS ավելի մեծ ժամաքանակի կարիք ունեմ», կամ «IHSS-ը դադարեցրել է իմ արտոնությունները»:

Նահանգային լսումների գրասենյակի հետ կապվելու և լսում հայցելու մի քանի ձև կա.

- 2անգահարել Նահանգային լսումների գրասենյակ և լսում հայցել. 800-952-5253 (ձայնային); 800-952-8349 (TDD)
- Ֆաքսով հակիրճ նամակ ուղարկել՝ լսում հայցելով. 916-651-5210 կամ 916-651-2789
- Լսման հայցի թերթիկը լրացնել առցանց. www.dss.cahwnet.gov/cdssweb/PG27.htm
- Հակիրճ նամակ ուղարկել փոստով՝ լսման հայցով, կամ լրացնել Գործողության ծանուցագրի լսման հայցի հատվածն ու ուղարկել այն հետևյալ հասցեով.
California Department of Social Services
State Hearings Division
P.O. Box 944243
Mail Station 9-17-37
Sacramento, California 94244-2430:

Լսման հայցում անապայման նշեք IHSS-ի օգտատիրոջ անունը, հասցեն, հեռախոսահամարն ու IHSS գործի համարը: Լսման հայցի մի օրինակը պահեք Ձեզ մոտ:

Եթե լսման հայց եք ներկայացնում հեռախոսով, ապա գրի առեք զանգահարելու օրն ու այն անձի անունը, ով գրանցել է լսման հայցը: Լսում հայցելու համար Ձեր տեղակալ IHSS գրասենյակ ՄԻ զանգահարեք; լսման հայց ներկայացնելու համար անհրաժեշտ է դիմել Նահանգային լսումների գրասենյակ:

Եթե Ձեր IHSS ժամաքանակը կրճատվել կամ դադարեցվել է, լսումն անապայման հայցեք Նախքան նոր ժամերն ուժի մեջ մտնելու մասին Գործողության ծանուցագրում նշված ամսաթիվը, որպեսզի Ձեր ծառայություններն անփոփոխ մնան, քանի դեռ հարցի լուծումն ընթացքի մեջ է:

Կարող եք խնդրել հեռախոսային լսում, և լսումը կանցկացվի հեռախոսով: Եթե դատարան չեք կարող ներկայանալ, կամ չեք կարող մասնակցել հեռախոսային լսմանը, ապա կարող եք խնդրել, որ լսումն անցկացվի Ձեր տանը, և դատավորը կգա Ձեր տուն: Կարող եք թարգմանիչ խնդրել, և նահանգը Ձեզ անվճար թարգմանիչ կտրամադրի: Լսման ժամանակ Ձեր ներկայացուցիչը կարող է ներկա լինել ու հանդես գալ Ձեր անունից: Սա կարող է լինել ընտանիքի անդամ, կամ արհեստավարժ մասնագետ:

ԻՆՉ Ե ԼԻՆՈՒՄ ԼՍՈՒՄ ԽՆԴԻԵՆՈՒՑ ՀԵՏՈ

Լսում խնդրելուց հետո Բողոքարկումների և նահանգային լսումների գրասենյակը Ձեզ նամակ կուղարկի՝ հայտնելով այն բողոքարկման մասնագետի անունը, ում Ձեր գործը հանձնարարվել է: Բողոքարկման մասնագետը ներկայացնում է IHSS ծրագիրը: Բողոքարկման մասնագետը կզննի IHSS-ի գործողությունների, կամ դրանք չձեռնարկելու պատշաճությունը: Բողոքարկման մասնագետը կլսի Ձեր մտահոգություններն ու դրանց մասին կխոսի Ձեր IHSS սոցիալական աշխատողի հետ: Բողոքարկման մասնագետը կարող է առաջարկել գործը կարգավորել պայմանական ետքաշման համաձայնագրի միջոցով, լսման գնալու փոխարեն:

ԻՆՉ Ե ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՏՔԱՇՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Բողոքարկման մասնագետը կարող է առաջարկել, որ Ձեր IHSS խնդիրը կարգավորեք առանց լսման գնալու՝ պայմանական ետքաշման համաձայնագրի միջոցով: Պայմանական ետքաշումն իրավականորեն պարտադիր համաձայնագիր է Ձեր և IHSS-ի միջև: Օրինակ, Դուք լսում եք խնդրել, որովհետև ավելի մեծ IHSS ժամաքանակի կարիք ունեք: Բողոքարկման մասնագետը համաձայնում է, որ ավելի մեծ ժամաքանակի կարիք ունեք, և որ IHSS-ը պետք է վերագնահատի Ձեզ: Բողոքարկման մասնագետը պայմանական ետքաշման թերթիկում կնշի, որ IHSS-ը պետք է վերագնահատի Ձեր ժամաքանակը:

Կարող եք IHSS-ին խնդրել, որ վերանայի Ձեր ժամաքանակը մինչև 90 օր հետադարձ հաշվարկով՝ սկսած լսման հայց Ձեր ներկայացնելու օրից: Օրինակ, եթե լսման հայց եք ներկայացնում ապրիլի 1-ին, ապա կարող եք IHSS-ին խնդրել, որ գնահատի Ձեզ ժամաքանակի ավելացման նպատակով՝ հունվարի 1-ից ի վեր հետադարձ հաշվարկով: Եթե Գործողության ներկա ծանուցագիր եք բողոքարկում, ապա կարող եք ավելի շատ ժամաքանակ խնդրել՝ բողոքարկվող Գործողության ծանուցագիրն այլապես ուժի մեջ մտնելու օրից հետո՝ հետադարձ ուժով: Եթե բողոքարկման մասնագետը համաձայնի Ձեզ հետ այն, որ IHSS-ը կգնահատի Ձեզ հետադարձ հաշվարկով ժամերի համար, ապա անպայման ապահովեք, որ այդ համաձայնությունը գրանցվի պայմանական ետքաշման թերթիկում:

Բողոքարկման մասնագետը պայմանական ետքաշման թերթիկը փոստով կուղարկի Ձեզ: Թերթիկը նկարագրում է Ձեզ հետ բողոքարկման մասնագետի համաձայնությունը: Կարող եք այն ուշադիր և ստուգել՝ արդյո՞ք այն ճիշտ է: Եթե ճիշտ չէ, դիմե՛ք բողոքարկման մասնագետին ու խնդրեք պայմանական ետքաշման թերթիկի ուղղված տարբերակը, որը ճիշտ կերպով կարտացոլի Ձեր համաձայնությունը: Մի՛ ստորագրեք պայմանական ետքաշման որևէ թերթիկ, եթե այն սխալ է:

Պայմանական ետքաշումն իրականացնելու համար IHSS-ն ունի 30 օր: Օրինակ, եթե IHSS-ը համաձայնում է վերագնահատել Ձեզ, ապա այն ունի պայմանական ետքաշման օրից հետո 30 օր՝ Ձեզ վերագնահատելու և նոր Գործողության ծանուցագիր ուղարկելու համար, նոր ժամաքանակով: Եթե IHSS-ը չկատարի բողոքարկման մասնագետի խոստացածը, ապա կարող եք դիմել նահանգային լսումների գրասենյակ և վերաբացել Ձեր լսման հայցը:



Դուք իրավունք ունեք չհամաձայնել Նոր Գործողության ծանուցագրում նշված Նոր ժամաքանակին: Դուք կարող եք Նոր Գործողության ծանուցագրի կապակցությամբ լսում հայցել՝ դիմելով Նահանգային լսումների գրասենյակ և վերսկսելով գործընթացը:

Դուք իրավունք ունեք մերժել պայմանական ետքաշման համաձայնությունն ու փոխարենը գնալ լսման: Կարող եք նաև ցանկացած պահի չեղարկել լսումը:

ԼՍՄԱՆԸ ՆԱԽՊԱՏՐԱՍԿԵԼԸ

Արդյո՞ք բողոքարկման մասնագետն ինձ որևէ տեղեկատվություն է տալու Նախքան լսումը

Բողոքարկման մասնագետը պարտավոր է դիրքորոշման հայտարարություն գրել: Դիրքորոշման հայտարարությունը Ձեր գործին վերաբերող փաստերի և օրենքի՝ IHSS-ի մեկնաբանությունն է և իր ձեռնարկած գործողության հիմնավորումը: Դիրքորոշման հայտարարությունը կարող է ներառել վկաների ցանկ, բժշկի զեկույցներ, Ձեր IHSS-ի սոցիալական աշխատողի գրառումները, և Ձեր գործի մասին այլ տեղեկատվություն: Բողոքարկման մասնագետը դիրքորոշման հայտարարությունը հանձնում է դատավորին:

Բողոքարկման մասնագետը պարտավոր է լսումից երկու աշխատանքային օր առաջ դիրքորոշման հայտարարությունը Ձեզ տրամադրել: Դուք կարող եք դիրքորոշման հայտարարությունը վերցնել բողոքարկման մասնագետի գրասենյակից, կամ բողոքարկման մասնագետը կարող է այն Ձեզ ուղարկել փոստով կամ էլ փոստով: Կարևոր է զննել դիրքորոշման հայտարարությունը, որպեսզի պատրաստ լինեք պատասխանել IHSS-ի արծարծած բոլոր հարցերին: Եթե Ձեր լսումից երկու օր առաջ դիրքորոշման հայտարարությունը չստանաք, կարող եք զանգահարել Նահանգային լսումների գրասենյակ և հետաձգում խնդրել:



Ձեր դիրքորոշման հայտարարությունը կարող եք գրել նաև ինքներդ ու տալ այն դատավորին: Ձեր փաստերը կարող են տարբերվել IHSS-ի փաստերից: Կարող եք ներառել բժշկի զեկույցներ, վկաների հայտարարություններ, լուսանկարներ ու գործին օժանդակող այլ տեղեկատվություն: Կարող եք լրացնել ինքնագնահատման աշխատանքային թերթիկը, որի օրինակը կարելի է գտնել այս գրքույկի էջեր 22-25-ում, և այն կցել Ձեր դիրքորոշման հայտարարությանը: Լրացված աշխատանքային թերթիկը դատավորին կօգնի հասկանալ Ձեր IHSS խնամքի կարիքները: Երբ ներկայանաք լսման, Ձեր դիրքորոշման հայտարարությունը տվեք ընդունարանի աշխատակցին: Եթե լսումը հեռախոսով է, ապա նախքան լսումը դիրքորոշման հայտարարության պատճենը ֆաքսով ուղարկեք Նահանգային լսումների գրասենյակ: Տեղական ֆաքսի համարը ճշտելու համար զանգահարեք Նահանգային լսումների գրասենյակ:

ԻՆՉ Ե ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ IHSS ԼՍԱՆ ՆԻՍՏԻՆ

IHSS լսումը վարում է վարչական իրավունքի դատավորը (Administrative Law Judge, ALJ): Դատավորից բացի, լսմանը ներկա է լինում նաև բողոքարկման մասնագետը, որն IHSS-ի ներկայացուցիչն է: Կարող են ներկա լինել նաև IHSS-ի սոցիալական աշխատողն ու IHSS-ի բուժակն:

Լսումը ոչ-պաշտոնական է: Կարող եք ներկայացված լինել փաստաբանի կողմից, սակայն անձանց մեծ մասը հանդես է գալիս իբրև սեփական փաստաբան:

Կարող եք վկա բերել, օրինակ՝ մատակարարին: Կարող եք նաև դատավորին տալ Ձեր դիրքորոշման հայտարարությունը, բժիշկների զեկույցները կամ նկարներ, որոնք կօժանդակեն Ձեր գործին: Կարող եք լրացնել այս գրքույկին կից ներկայացվող ինքնագնահատման աշխատանքային թերթիկն ու մի օրինակը տալ դատավորին:

Սովորաբար, դատավորը կհարցնի՝ ի՞նչ խնդիրներ եք ցանկանում քննարկել: Դատավորը բողոքարկման մասնագետին կհարցնի՝ ինչպե՞ս է IHSS-ը հաշվել Ձեր ժամաքանակը յուրաքանչյուր տեսակի համար, օրինակ՝ լրձանքի, հագնվելու ևն: Մասնագետը կպատասխանի՝ ելնելով IHSS սոցիալական աշխատողի գնահատումից, ապա Դուք կարող եք ներկայացնել յուրաքանչյուր տեսակի համար Ձեր ընդհանուր ընդհանուր կարիքները:

Թեև կարող եք չհամաձայնել Ձեր կարիքների վերաբերյալ IHSS սոցիալական աշխատողի գնահատմանը, սակայն խորհուրդ ենք տալիս հարգանք պահպանել: Կարող եք IHSS-ի սոցիալական աշխատողին հարցեր տալ ու չհամաձայնել բողոքարկման մասնագետի ներկայացրած ապացույցներին:

Դուք հնարավորություն կունենաք մանրամասն բացատրել՝ քանի ընդհանուր անհրաժեշտ յուրաքանչյուր IHSS գործողության համար: Ձեր սեփական կարիքներն ինքներդ ավելի լավ գիտեք, քան IHSS-ը: Ձեր տնային խնամքի կարիքները նկարագրող օժանդակ լուսանկարներն ու բժշկի զեկույցները ևս օգտակար են:

Դատավորը կգրանցի է լուսն ու կներկայացնի գրավոր որոշում: Դատավորն իր որոշումը Ձեզ կուղարկի փոստով: Դատավորն իր որոշումը պետք է հրապարակի Ձեր կողմից լուսն հայց ներկայացնելուց հետո 90 օրվա ընթացքում: IHSS-ը պարտավոր է ելնարկվել դատավորի որոշմանն ու նոր Գործողության ծանուցագիր հրապարակել՝ դատավորի կողմից շնորհված ժամաքանակով:

Եթե որոշման հետ համաձայն չեք, կարող եք վերալուսն խնդրել, կամ դիմել վերադաս առյանից ուղղորդիչ որոշման: Այս տարբերակները, ինչպես նաև վերալուսն կամ ուղղորդիչ որոշում հայցելու վերջնաժամկետները ներկայացված են Ձեր լուսն արդյունքով ընդունված որոշման առաջին էջում:

IHSS ԽՆԴՐԻ ՕՐԻՆԱԿ.

Սյուն ավելի մեծ IHSS ժամաքանակի կարիք ունի. ի՞նչ կարող է նա անել իր IHSS ժամերն ավելացնելու համար

IHSS-ը Սյուն գնահատել է վեց ամիս առաջ, և Սյուն ստանում է ամսական 100 IHSS ժամ: Գնահատումից հետո Սյուն ընկնում ու կտորում է կոնքը: Նախկինում բազմաթիվ գործողություններ Սյուն ինքնուրույն էր կատարում, սակայն այժմ նա ավելի շատ օգնության կարիք ունի: Նա զանգահարում է իր IHSS սոցիալական աշխատողին ու հավելյալ ժամեր է խնդրում, սակայն սոցիալական աշխատողը ժամերը չի ավելացնում:

Սյուն այդուհետ լրացնում է այս գրքույկին կից ներկայացվող IHSS Գնահատման աշխատանքային թերթիկն ու իր անհրաժեշտ ժամաքանակը համեմատում իր վերջին Գործողության ծանուցագրում ներկայացված ժամաքանակի հետ: Նա հասկանում է, որ ավելի մեծ ժամաքանակի կարիք ունի՝ լրձանքի, դեղորայքի և տնային վարժությունների համար:

Սյուն իր IHSS սոցիալական աշխատողին է ուղարկում հետևյալ նամակը.

Սեպտեմբերի 1, 2016

Հարգելի Սոցիալական աշխատող,

Ես հավելյալ ժամաքանակի կարիք ունեմ հետևյալ ծառայությունների համար.

Լոգանք. Իմ մատակարարն օգնում է ինձ ամեն օր լոգանք ընդունել, յուրաքանչյուր լոգանք պահանջում է 30 րոպե:

Դեղորայք. Իմ մատակարարը յուրաքանչյուր շաբաթ լցնում է դեղահաբերի իմ տուփը, ինչը 10 րոպե է պահանջում: Օրը երեք անգամ նա ինձ օգնում է դեղերիս հարցում: Դա յուրաքանչյուր անգամ երեք րոպե է պահանջում:

Տնային վարժություններ. Իմ մատակարարն օգնում է ինձ օրը երկու անգամ տնային վարժություններ կատարել, ինչը յուրաքանչյուր անգամ 30 րոպե է պահանջում:

Խնդրում եմ զանգահարել ինձ իմ IHSS ծառայության կարիքները քննարկելու նպատակով:

Հարգանքով,
Սյուն

IHSS սոցիալական աշխատողը Սյունին ետ չի զանգահարում, ուստի վերջինս լսման հայց է ներկայացնում: Լահահազային լուսմների գրասենյակը Սյունի գործը հանձնարարում է բողոքարկման մասնագետին: Սյուն իր նամակի օրինակն ուղարկում է բողոքարկման մասնագետին: Սյուն ու բողոքարկման մասնագետը համաձայնում են, որ IHSS-ից նրան տուն կայցելեն ու զնահատում կանցկացնեն ժամաքանակն ավելացնելու նպատակով: Մասնագետն ու Սյուն պայմանական ետքաշման համաձայնությունն են ստորագրում, որն աատում է, որ IHSS-ը կանցկացնի նրա վերազնահատում:

IHSS սոցիալական աշխատողը վերազնահատում է Սյունին: Սյուն IHSS սոցիալական աշխատողին է հանձնում IHSS գնահատման աշխատանքային թերթիկի կրկնօրինակը, որում թվարկված են այն ժամերը, որոնց կարիքը նա ունի լոգանքի, դեղորայքի և տնային վարժությունների համար: IHSS-ը Սյունին է ուղարկում Նոր Գործողության ծանուցագիր՝ նրա ժամաքանակն ավելացնելով մինչև ամիսը 125 ժամ:

ԻՆՉՊԵՏՍ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՏՆԵԼ IHSS ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՓԱՍՏԱՐԿԱՆ ՄԱՍԻՆ

Տնային օժանդակ ծառայությունների հանրային մարմինը տրամադրում է մատակարարների ցանկեր, ինչպես նաև սպառողի ու մատակարարի պարապմունքներ և կրթական հնարավորություններ: Որոշ հանրային մարմիններ պահեստային մատակարարներ, կամ այլ Նորարարական ծրագրեր են առաջարկում: Հանրային մարմնի ծառայություններն անվճար են: Ձեր տեղական Հանրային մարմնի տվյալների համար դիմե՛ք IHSS-ի հարցերով Կալիֆորնիայի Հանրային մարմինների ընկերակցություն (California Association of Public Authorities, CAPA). www.capaihss.org; 916-492-9111:

Disability Rights California-ի կայքը մանրամասն տեղեկատվություն է պարունակում IHSS ծրագրերի, մատակարարների վճարման, IHSS կանոնների ու կանոնակարգերի,



ինչպես նաև նրանց մասին պատմող գերազանց ուղեցույցի՝ IHSS Nuts & Bolts Manual-ի վերաբերյալ: Այդ ամենը կարող եք գտնել www.disabilityrightsca.org կայքում, կամ զանգահարելով 800-776-5746:

Իրավաբանական օգնության գործակալությունները, օրինակ՝ Bet Tzedek Legal Services-ը, կամ Disability Rights California-ն, անվճար իրավաբանական ծառայություններ են մատուցում որակավորում ունեցող անձանց և կարող են օգնել IHSS շահերի փաստարկման ու ներկայացման հարցերում: Տեղական իրավաբանական օգնություն կարող եք գտնել հետևյալ կայքում. www.lawhelpca.org:

ԻՆՉ ԵՆ ՎՃԱՐՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ՀԱՍԱՐ ԱՅՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Medi-Cal-ի Բուժակային հաստատության/Սուր հիվանդանոցային թողազիրը (Nursing Facility/Acute Hospital Waiver) ծածկում է տևային խնամքը: Թողազրի որակավորում ձեռքբերելու համար անհրաժեշտ է ունենալ բուժակային հաստատության մակարդակի խնամքի կարիք: Թողազիրը Ձեզ հատկացնում է տևային խնամքի ամսական բյուջե: Բյուջեի սահմաններում Դուք ընտրում եք տևային խնամքի այն ծառայությունները, որոնց կարիքն ունեք: Կարող եք ընտրել բուժակային խնամք, LVN (Արտոնագրված կրտսեր բուժակի) խնամք, առօրյա օգնականի խնամք և այլ ծառայություններ: Այս Թողազրի ներքո անձանց մեծամասնությունը ստանում է ամսական առնվազն 300 ժամ առօրյա օգնականի խնամք: Այս թողազիրը հերթագրմամբ է: Դիմելու համար զանգահարեք Տևային գործողությունների բաժանմունք՝ 916-552-9105 Սաքրամենթոյում, կամ՝ 213-897-6774 Լոս Անջելեսում:

Վետերանների համար, ովքեր 90 օր և ավելի ծառայել են Չինված Ուժերում, ներառյալ գեթ մեկ օր՝ պատերազմի ժամանակ, կան վետերանների արտոնություններ: Aid and Attendance և Homebound ծրագրերի ներքո, տևային խնամքի կարիք ունեցող վետերանները կամ նրանց ամուսինները/կանայք կարող են թոշակ ստանալ՝ տանը կան բուժակային հաստատությունում իրենց ստացած անձնական խնամքի ծառայությունների դիմաց վճարելու նպատակով: Վետերանը կամ նրա ամուսինը/կինը պետք է ներկայացնի խնամքի կարիքը հաստատող բժշկի տեղեկանք, ինչպես նաև համապատասխանի ցածր եկամտի և ունեցվածքի հետ կապված որոշ չափանիշների: Դիմելու համար կապվեք Վետերանների գործերի վարչություն՝ 800-827-1000:

IHSS ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

Հետևյալ գործողություններում օգնության կարիք ունե՞ք	Նշե՛ք, ինդրեմ, օգնության այն մակարդակը,		
	Այո կամ ոչ	Բանավոր հիշեցման կարիք ունեք	Կարող եք ան օգնության կա
Տնային ծառայություններ			
Օգնություն տնային գործերում			
Առնչվող ծառայություններ			
Կերակուր պատրաստել			
Սեղանը հավաքել			
Լվացք			
Մթերքի գնումներ			
Չանագան այլ գործողություններ դուրսը			
Անձնական բնույթի ոչ-բժշկական ծառայություններ			
Շնչառության հարցում օգնություն. թթվածին, ներվայգեր, շնչառական այլ սարքավորում			
Չուգարան. նստել զուգարանակոնքին/վեր կենալ զուգարանակոնքից մաքրվել, տակդիրավոր անդրավարտիքներ			
Կերակրել. ուտել և խմել			
Լոգանք անկողնում կամ լոգանք սպունգով			
Հագնվել			
Դաշտանային խնամք. օգնություն տակդիրների հարցում			
Քայլել կամ շարժվել			
Փոխադրվել, անկողին մտնել/ անկողնից վեր կենալ կամ աթոռին նստել/աթոռից վեր կենալ			
Տնցուղ կամ լոգանք ընդունել			
Սանրվել			
Ատամները, արհեստական ատամնաշարերը խոզանակով կամ ատամնաթելով մաքրել			
Սափրվել			
Արյան շրջանառության մերսում			
Դիրքափոխվել, անկողնում շրջվել			

Այս գնահատման թերթիկը կազմվել է Կալիֆոռնիայի սոցիալական ապահովության իրավունքների կազմակերպությունների դաշինքի (Coalition of California Welfare Rights Organizations) օգնությամբ:

IHSS ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետևյալ գործողություններում օգնության կարիք ունե՞ք	Նշե՛ք, ինդրեմ, օգնության այն մակարդակը		
	Այո կամ ոչ	Բանավոր հիշեցման կարիք ունեք	Կարող եք ասել օգնության կարիք
Անձնական բնույթի ոչ-բժշկական ծառայություններ, շարունակ.			
Շարժման տարածության վարժություն, ուժեղացման վարժություն, օգնությամբ քայլելու վարժություն			
Հագնել ատամնաշարի ուղղիչ սարքեր կամ հատուկ սարքավորում, լողական օժանդակության սարքեր			
Դասավորել ու ընդունել դեղորայքը			
Լիցքավորել/մաքրել անվասայակը			
Ուղեկցության ծառայություններ			
Գնալ բժշկական ժամադրության			
Պարաբժշկական ծառայություններ			
Ստուգել արյան շաքարի մակարդակները			
Ինսուլին ներարկել			
Այլ պարաբժշկական ծառայություններ	Օգտագործե՛ք այս տարածությունը՝ նկարագրելու և մանրամասնելու այլ պարաբժշկական ծառայություններ, որոնց կարիքն ունեք		
Պաշտպանական վերահսկողություն	Եթե անձը մտավոր սահմանափակում ունի և վտանգավոր վարքագծի պատճառով տանի միայնակ չի կարող մնալ, ապա պաշտպանական վերահսկողություն հայցեք: Ստորև		

Այս գնահատման թերթիկը կազմվել է Կալիֆորնիայի սոցիալական ապահովության իրավունքների կազմակերպությունների դաշինքի (Coalition of California Welfare Rights Organizations) օգնությամբ:

Bet Tzedek-ը երախտագիտությամբ նշում է Լոս Անջելես քաղաքի Տարիքային առաջխաղացման հարցերի վարչությանն ու Unihealth հիմնադրամին՝ այս հրապարակումը ֆինանսավորելու համար:



Ֆինանսավորումը հնարավոր է դարձել Ամերիկայի Միացյալ Նահանգների Արդարադատության Նախարարության, Հանցագործության զոհերի մասին Օրենքի շնորհիվ, 2015-KU16011588:



3250 Wilshire Boulevard, 13th Floor, Los Angeles, CA 90010
323-939-0506 • www.bettzedek.org